



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՒԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՄԻԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԵՒԱ ԸՆԴԱՐԱԹ 13 ՓԵՏՐՈՒՆ 1971

ԹԻՒ 903

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Վաղղիան յաղթուն էին տկարացած և միացեալ Գերմանիան իւր ըրած յաղթութիւններէն դուրսէ ևս առաւել տկարացած, երկու կողմէն արեան հեղեղներ, սոսկալի զոհողութիւններ և հազարի կորուստներ տեղի ունենալէ ետեւ, վերջապէս յիշեալ պատերազմ միջ երկու մեծ տէրութիւններն ևս տրամադիր և հակառակ էն հաշտութիւն ընելու: Տար Լատուած որ հաստատուելու հաշտութիւնը տեղեկան ըլլայ, տար Լատուած որ այս սոսկալի շարեաց յիշատակը շուտով շնչուէր դադարեցնել իւրաքանչեւ քաջ ազգին որտիւն մէջ, ապա թէ ոչ, շատ չանցած՝ Լատուած դժբաղդաբար դարձեալ հանդիսատես պիտի ըլլայ քրիստոնէի ահապին պատերազմի մը:

«Լատուած քարոյս, կըսէ փարիզի Տէպա օրագիրը, երթան քարոյս 1870 աղետալի տարի: Ոչնչի ծանրութեամբ որ ծանախիւ ըրիր զմեզ երկրի վերայ, նոյնչափ ծանախայ երկիրը քու դերեղմանիդ վրայ: Լայն ամեն հողերը զոր կրթափեմք մը մուտնայ վերայ, քու շնորհք և քու յիշատակիդ վերայ գիշտուին բարեգործին: Լայն, քու յիշատակիդ վերայ, քանզի զայն թաղել կուզեմք քիզի հետ»:

«Լատուած պատերազմին պատճառած աղէտից ցուալի յիշատակին շնչուելու փոփոքելէ ետեւ, Տէպա լրագիրը հետեւեալ կերպիւ կըմտնար Վաղղիայ կայսերական անկեալ կառավարութեան անդամները, պաշտօնատարները և բոլոր զազկացի ազգը»:

«Լայն պատերազմին սկիզբէն ի վեր» անոնք որ չուզեցին զայն, անոնք որ պատերազմին աղէտալէ հետեւութիւնները և մանաւանդ սոսկալի կորուստները կըզուշակէին, բայց և այնպէս հաւանութիւն տուին տնոր՝ իբրեւ պարտաւորութիւն մի, կամ դրեթէ իբրեւ պարտաւորութիւն և իբրեւ քառութիւն մի: Լայն չարիքը՝ եթէ արդարութիւն կըզտնուէր տեղ մը, պէտք էին ծանրանալ միայն անոնց վերայ որոնք՝ տեսնելով թէ ինչալու վերայ է կայսերական ինքնիշխան կառավարութիւնը որ չճ տարի տրեւծ էր, բաւական կըհամարէին ըսել զամբարանական համառօտ ճառի մի

տեղ, «Հոգ չէ. քանզի ժամանակնիս շատ աղէկ և լի զբօսանք անցուցինք»:

«Սակայն անոնք իսկ որ մասնակից եղած չէին այս զբօսանք, չէին կրնար իրենց վիճակը՝ իրենց ապաւանք զատել հասարակաց հայրենիքէն: Որովհետեւ ամեն աղտոտ և զարշիլի զօրքերը՝ որոց այնչափ երկար ժամանակ հանդիսատես եղանք, ընդհանուր քուէարկութեան ընկալան զբաղեցումն և զարձակումն (ի մեղաց), հետեւաբար բոլոր ազգը պատասխանաւոր կըհամարուի զլուխնիս հասած աղէտիցը: Եւ մեզ ի վիճն արկանող մարդոյն կրնար արժանի ըլլալ ըսելով՝ «Ես չէի, Վաղղիան էր որ պատերազմ ուղեց»:

Բայց զոհեալն՝ այսինքն՝ զազկացի արժանի չէր ըսելով՝ «Մեք չէինք, այլ նա էր պատերազմ ուղեցը»: Լայն, ամենքս աւարժանի եմք պատճառ յանցանքց, որոց զործողներուն լոյծը համբերութեամբ տարինք: «Սակայն միութարութիւն մի կըմտնար մեզ, եթէ կրնայինք յուսալ թէ մեր աղէտից զոհուել պիտի փերկէինք ապագայ սերունդները, թէ մեր արիւնը մեր զաւակաց փրկանքը պիտի ըլլար: Եթէ կրնայինք հաւատաւոր թէ ժողովրդոց հին աւուրց ոխերը՝ իրենց վերջին յաղաթը պիտի դանէին այս գերագոյն մաքսման մէջ և պիտի չէնանէին, մարէին արեան այս հեղեղին մէջ. վերջապէս եթէ կարելի ըլլար միջոցաւ թէ ապագային խողովորութիւնը կըվճարեմք»:

«Բայց աւել որ այնպէս չէ. քանզի որովհետեւ վիճը զվիճը կըբանայ, արիւնը զարիւն կըկոչէ, և թողաւորաց զոհակներէն փորձած ակօսներուն մէջ ցանկանալով սերունդներ չեն կրնար բարձր բան տրուել: Բայց միայն վրէժխնդիր հունձքեր, հետեւաբար խաղաղութիւնը, բարօրութիւնը, աշխատութիւնը և մարդոց առողջութիւնը նորէն տակնուվերայ պիտի ըլլան ապագայ սերնդոց մէջ»:

Իտալիոյ կառավարութիւնը՝ որուն հեռատես և խոհեմ ընթացքը կըշարունակուի միշտ վիճարկելով Լատուած օգոստոսական թաղաւորին կենցաղագէտ հանձարին ազդեցութեամբ, իւր զործակցութիւնը մատուցանելով հանդերձ միւս չէզոք մեծ տէրութեանց՝

գիւրացներու համար զպայմանները հաշտութեան որ ըլլալու վերայ է ի մէջ Վաղղիոյ և Գերմանիոյ, Իտալիոյ կառավարութիւնը՝ կըսեմք, իւր զաւառները նորանոր բարեկարգութեամբ զարգացներու վերայ է, մանաւանդ նոր ձեռք բերուած հոռոմի պաւտը, որուն բնակիչները ոչ սակաւ ներդրութիւն կըբաշխեն կղերական անկարգ կառավարութեանէն:

Մինչև որ հարկաւոր եղած պատրաստութիւններն ի զօրք դրուին թաղաւորանիստ մայրաքաղաքը ի հոռոմ փոխադրելու համար, այս երկրին ընդհանուր կառավարութիւնը արքայազուն Հիւմպերթ Իւլիանին յանձնուեցաւ, որ իւր լծակից իշխանուհի Վաղղիան արդէն հասաւ ի յաւիտենական քաղաք, ուր ջերմութեամբ սիրով և ուրախալից ցոյցներով փառաւորապէս ընդունուեցաւ ի հոռոմացոյ:

Երեւելի մէջ միացեալ Իտալիոյ բարոյական և քաղաքակրթական ազդեցութիւնը յաջորդեց լուրջապական ազդեցութեանը՝ որ Վաղղիոյ կայսերական անկեալ կառավարութեան օգոստոսական և զործակցութեամբ ոչ սակաւ մեծ կըհասցնէր ոչ հոռոմական քրիստոնէայ ազգաց, Իտալիոյ բարոյական ազդեցութիւնը, կըսեմք, օգտակար յոյժ պիտի ըլլայ Երեւելեան քրիստոնէից, որոնք վիճարկելով Լատուած վիճակ, թաղաւորին մարդասէր և ազատասէր կառավարութեան խնամքը անտարակոյս ազատ պիտի մնան իրոքական տայի ժողովոյն յայտնի ու զաղանի դարաններէն և ամեն կերպ հնարքներէն, որոց նպատակն էր պապականութեան հետամուտներ և առաւելելով Լատուած ժողովրդոց կրօնական իրաւունքները յափշտակել և արտօնութիւնները անհետ ընել ի մեծ մեծ Բրիտանիոյ եկեղեցոյն:

Լատուած նայելով՝ Լատուածի դեսպանագործը, որ ի մասին Սե Ժովուր ազատութեան Սուրբ Կառավարութեան ըրած խնդիրը քննելու ու կարգադրելու համար դուրսբերուած էր, իւր պաշտօնը յաջողութեամբ և համաձայնութեամբ բոլոր անդամոց կատարեց է. այսինքն 1856ին եղած փարիզի դաշնագրութեան մէջէն վերցուցեց է այն պայմանները որ

նայ դաշտն, վսեմա. Նաղիֆ փաշան իւր թարգման Ստրեպտիոն էֆենտին հետ մեր վսեմա եկաւ տեսնել թեան պատճառաւ, և այն խնդիրները բացաւ մեզմէ յտուալ, և ըսաւ. «Տեր լոյսը կարգադրել, իրաւունքներդ արդար է, և ես պարտաւոր եմ իմ տէրութեան հպարտական իրաւանց վրայ օրինաւոր հսկիմ, այլ բան մէն ալ կայ որ, այն ալ պէտք է մտածեմք, ետքը քաջ եաբարքեմ, կեօզ քաբարմալալըմ: Սյա Լատին կղերաց արարքներն և բնութիւնն ուրք մեզմէն լաւ դիտեք, ասանք երբ իմանա թէ իրենց այս սովորութիւնն պիտի խախտուի, թէ և արդարութեամբ, բայց անոնք բոլոր աշխարհ վրէժակի կուտան, նախ զեսպանին, ապա Բաբային, յետոյ բոլոր Եւրոպիոյ տէրութեանց սուտ ու օր խալ տեղեկութիւն կուտան: Նա մանաւանդ, ահա երկու օր մնաց անոնց գաղտն, ամեն բանին յտուալ իրենց բնական եղած աստատմական ոգին ձեռք պիտի առնեն բուն զօրութեամբ պիտի յարձակին ձեր վրայ, և ես պիտի պարտաւորեմ միջամտել ընել զօրք իրենց լով, և իրենց սովորութիւնն կատարել ալ, որով անկեղ զէջ կըլլայ մէջ, ասոր համար եկայ որ պէտք եղածները ձեզ խօսիմ, որ զուրք ըստ այնմ պատաստ գտնուիք»:

Հրամայեցէր փաշա էֆենտին, ըսի, մեր ինչպէս զուտուելուն եղանակը մեզի ծանուցանել, որ մենք ալ խառնամք: և եթէ արդար և օրինաւոր է և մեր իրաւանց չէզոքել, պարտաւոր եմք ընդունել և զօրծաղել իբրեւ հարազատ հպատակ տէրութեան, բայց տա՛ր Լատուած որ ձեր վսեմութեան ըսելիքներն ալ հարազատ և հուստարիմ հպատակ արժանաւոր ըլլային, և անոր արդար իրաւանց պաշտպանութեանը օգտակար:

Դարձեալ կըսեմ, Նաղիֆ փաշան. «Կուք Ձեր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՍՈՒՐԲ ՏԵՂԵՍՑ ԽՆԴԻՐԸ

(Դարձեալ նախորդին:)(1)

Այսպիսին գոհ չըլլալով՝ աւելի պաշտօնական կերպով, քան մի տալու համար, Լատին եկեղեցոյ մէջ զնելու առանձին արտօնութիւն ունեցած իւր պաշտօնական տէրութեան հետը կըբերէ իմ ազատ եկեղեցոյ մէջ զնելու: և բոլոր ազգաց իրաւունքները որոք տակ առնելով և զիս և իմ ազգս մեծադոր Տէրութեան աշխի կասկածելից ցուցնելու համար պաշտօնական (ուսկիւն) ըզզեանները հազած այնպէս կուգայ. որ բնաւ եղած բան չէր: Սյա ցուալի լուրք թէպէտ ինչպէս Եղիպտոս մէջ, բայց ինչ կրնայի ընել, արդէն եղածն եղած էր. նա իւր նպատակը ի զօրք դնելու միջոց գտած էր:

Հետեւեալ տարին իմացայ հետեւանց թէ յիշեալ հիւպատոսը նոյն հանդիսի ու պաշտօնական զաւրդարմեալ միտք ունի, ուստի 20 օր յտուալ իրեն մէջ սերտ բարեկամութեամբ քովս կանչել տալով, և ասով տարուան եղած զէպքերն իրեն պատմելով՝ լուր իրենցիկ իրեն որ եթէ զարձեալ այն կերպով զաւր ընէ՝ չեմ ընդունիր զինքը, վսեմալ ալ չէ բարեկամութիւն ըսի, և այլ է պաշտօնականութիւնը որուն մէջ կրնայ իրաւունքներ զոհ ըլլալ, և քաղաքականութեան զէմ անպատեհութիւններ ծագել: Սնցեալ տարուան բերած զօրքերուն զաւրթիւնէն, որուն պաշտօնական ամբողջ և զնեկիւնութեամբ զաւրն համար իրեն կըբողոքեմ միայն ի շնորհս իւր բարեկա-

(1) Տես լրագրոյ նախընթաց քիւք:

չէզոքութեան վիճակի մէջ կը դնէին զՍԷ ծովը ու անոր մէջ Սիւսիոյ և Բարձրագոյն Պարան ունենալու պատերազմական նսուց թիւը որոշած էին : Բայց յայտնաճէ յիշեալ գետաշտաժողովը վերադարձուցեր է օսմանեան կայսերական կառավարութեան՝ իւր իրաւունքը ՚ի մաւին թողլ տալու կամ մերժելու ո՛ր և է օտար տէրութեան, որ իւր պատերազմական նսուցը Պարշապէի և Վոսթրի նեղուցներէն անցնին : Ահա այս կերպիւ խաղաղութեամբ և բարեկամաբար լմընցած կը համարուի ծանր խնդիր մի, որ ՚ի սկզբան ոչ սակաւ յուզեց միտքերը՝ քաղաքային մօտաւոր խառնաշփոթութեան երկիւղով :

Ինդհանրապէս կը յուսացուի թէ Ամերիկայի հասարակապետութեան ու Անգղիոյ մէջ եղած Ալապամայի հին վէճը ևս, որուն կարողութեանը համար յիշեալ հասարակապետութեան նախագահ Կրանթ զօրապետը խառն՝ այսինքն Ամերիկացիներէ և Անգղիացիներէ բաղկացեալ յանձնաժողով մի սահմանած է, խաղաղութեամբ պիտի լմընայ :

ԱԶԳԱՅԻՆ

ՍՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Այս վերնագրով ամսական բանասիրական տետրակ մի Յունուարէն սկսեալ կը հրատարակուի քաղաքիս մէջ, խմբագրութեամբ պատուելի պարոն Սատթէոսի Սամուելեան, որ կը խոստանայ քաղաքական, պատմական, տնտեսական, իմաստասիրական և այլ գիտելեաց վրայօք ճառերով, օրոտկար և միանգամայն ակորժելի ընելամնուն իւր յօդաւածները : Սիրելի է մեզ յուսալ թէ կարող պիտի ըլլայ իւր ազդասիրական նպատակին հասնիլ, մանաւանդ եթէ ուսումնասէր ազգայնոց կողմանէ քաջալերութիւն գտնէ, որուն արժանի է ամեն կերպիւ :

Հաջողութիւն և յարատեւութիւն կը բարեմաղթեմք մեր ուսումնական պաշտօնակից եղբօրը՝ յիշեցնելով անոր թէ այս օրուաները չիրնար ձեռք բերուիլ առանց չըջահայեցութեան և առանց խոհեմութեան :

Արեւելեան Սամոյի տարեկան բաժանորդութեան սինն 4 արծաթ մէճիտ է Իգմիրի համար, իսկ օտար երկիրներու համար 5 մէճիտ կամ 10 Կօնքանիոյ ուսուցիչի : Հնչակաւորներ, Պարսկաստանի և Ռուսաստանի մեր բարեկամները՝ որոնք կուզեն բաժանորդ գրուիլ այս հանդիսին, յօժարամիտ յանձնառու կը ըլլամք Արշալոյս ծրարին հետ յուզարկել նոցա զայն :

ՕՐԻՆԱՒՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԻ

Արեւելեան Սամոյի առաջին թուոյն մէջ ցաւօք սրտի կարգացինք այնպիսի պարբերութիւն մի, որ

տուած բողբոջ կ'ուզէր որ տէրութեան զօրքը չգայ ձեր վանքին դիմացը, և զապթիէներ չկայնին եկեղեցւոյ վապին մէջ, հիւպատոսը համազգեստով չգայ, և իրեն յատկացեալ պաշտօնական աթոռը հետը չբերէ. ասոնք չեն ձեր արգիլել ուզածնիդ՝ տուած խնդրագրերն ուղ համեմատ՝ : Այո՛, պատասխանեցի. — Ասոնց ամեն ալ ոչինչ բաներ են, ըստ վտեմա. Նաղիֆ վաշան, մտիկ բրէք որ ձեզ բացատրեմ : Նախ՝ կըցալիք և չէք ուզէք որ տէրութեան կանոնաւոր զօրքը և զապթիէք ձեր վանոց դիմացը գան այն օրը. ասկից ի՞նչ կ'իլլէ, զօրքը Պաղդիոյ տէրութեան զօրքը չէ, այլ մեր տէրութեան, որուն հովանաւորութեան տակ կը գտնուիք դուք. այս առիւթ ձեզ օգտակար և պատիւ է, ասկից երբէք վնաս մի չլինար ծնանիլ. ասոր համար այսբան տաղնապիլ և աղիւն անդին խնայ բողբոջելիդ առիւթ է :

Երկրորդ. Պաղդիոյ հիւպատոսին համազգեստով գալը, ասկից ևս ի՞նչ վնաս կրնայ ծագել. համազգեստով կամ առանց համազգեստի եկեր է, ինքը գիտէ. ինչպէս կուզէ թող գայ, եթէ պատիւ և եթէ անարգութիւն իրենն է, քանի որ ինքն կ'ընդունի և կ'ընէ՝ ինքը գիտէ. ասկից ալ ձեր իրաւունքին դաչելու բան մը չեմ նշմարեր. ուստի խօսելին անգամ չարժեք. լուկը առելի լաւ է՝ որ վերջը ըլլալիք գէշութիւններէ ազատ կը մնար :

Երրորդն է. Պաղդիոյ հիւպատոսին իրեն յատկացեալ աթոռը հետը բերելը. այս ևս ՚ի կարգի միւս խնդրոց նկատել պարտիմք : Նոյն աթոռը բերելը չբերելը բան մը չըլլայ այնքան, եթէ բերած աթոռը կրկին ետ չտանի և ձեր եկեղեցին ձգէ տեղ մը յատկացնելով, այն ժամանակ կը իրաւ որ ձեր իրաւանց դպած կըլլայ, քանի որ կը տանի, անկից ալ վտանգ մը չկայ՝ :

մեծապէս կընուստացնէ Հայոց ազգին ընդհանրութիւնը և լի է թշնամանք մեր վեհափառ սրբադան կաթողիկոսին համար. և այս պատճառաւ՝ իբրեւ ջերմեանդ և հաւատարիմ որդի Ս. Եջմիածնայ մայր Աթոռոյն և իրեւ ճշմարիտ ազգասէր և նախանձախնդիր իրաւանց ընդհանուր ազգին՝ մեր նուիրական պարտքէն վրիպած պիտի ըլլայինք եթէ լուծութիւն պահէլ ուզէինք այսպիսի անիրաւ յարձակման մը դէմ :

Ահաւասիկ այս պարբերութիւնը :

«Եջմիածնայ մայր Աթոռոյն իրաւանց ախոյեան կենալու ատենը՝ ընդհանուր ժողովը, փոխանակ օրհնութեան կոնդակի՝ որ մինակ փձուռ մասնաւորութեց կը բաշխուի, թշնամական կոնդակ մի կընդունի, որպէս թէ Եջմիածին և Սիւս համազօր և չէ թէ հակաթոռ դատուելով՝ մայր Աթոռոյ իրաւունքն առաւելու կը կոխուի : Ս. կաթողիկոսն՝ որ նոյն ընդհանուր ժողովին պարտաւոր է իր էութիւնը՝ կընմանի այն փառամոլութենէ և մարդաբաւ քաղաքականութենէ մոլորած Հօր մը, որ իր զաւակները կապտակէ՝ ճիշտ այն միջոցին որ իր շղթաները կոտորել կը ճգնին» :

Կ. Պօլսոյ ազգային երեսփոխանական ժողովը՝ որուն ինչ արժէք ունենալը՝ Սափաէն առնելով՝ հրատարակած եմք մեր նախընթաց թուովը, և որուն մէջ գաւառական Հայք իրենց ներկայացուցիչները չունին, ինչպէս և ինչ իրաւամբ կրնայ էութիւն տալ՝ չորս միլիոնէ բաղկացեալ ազգի մը ընդհանուր Վահանայապետին : Որոնք են արդեօք Վորին վեհա. Սրբաշնութեան շղթաները՝ զորս յիշեալ ժողովը կտարելու կը ճգնի եղբ. և Փառամոլութիւնը և մարդաբաւ քաղաքականութիւնը՝ փոխանակ Հայաստանեայց կաթողիկէ եկեղեցւոյ գերագոյն Հովուին վերայ փնտնելու, որուն պատիւը և փառաւորութիւնը ընդհանուր ազգին կրկնաբար, ուրիշ տեղ փնտնելու է դանոնք : Ս. Եջմիածնայ մայր Աթոռոյն իրաւունքը պաշտպանելով, մեր Ս. կաթողիկոսը՝ Հայոց ազգին իրաւունքը կը պաշտպանէ իբրեւ փոխանորդ և հոգեւոր գլուխ նորին՝ օրինաւորապէս ընարուած և ընդունուած ՚ի բոլոր ազգէնք հետեւաբար միթէ իշխանութիւն պիտի չունենայ յանդիմանական կոնդակ յուզարկելու և է ազգային ժողովոյ մը, որ իւր ձեռնահասութենէ դուրս ելած գործոց— ձեռք գլուխ — Առաջադասութեան պարզ պատմութեան ունեցող անձ մի, մասնաւոր դրացի մի, վերջապէս ո՛ր և է անձ մի իւր կարծիքը յայտնելու ազատութիւն ունի, և մեր վեհա. կաթողիկոսը ազատութիւն պիտի չունենայ օրհնութեան, խրատական և յանդիմանական կոնդակներ յուզարկելու որոց որ արժան կը համարի :

Ապաքէն խիստ տղայական և ամենասխալ դատողութիւն մըն է կարծելը՝ թէ Ս. Եջմիածնայ վեհափառ

Այս խօսքերը քանի որ վսեմա. Նաղիֆ վաշան կը խօսի, իրեն թարգմանն ալ միշտ՝ այո՛, այոպէս է, այս բաներուս վրայ բան խօսելը անգամ առիւթ է, այս բաներուն մէջ վնասակար բան մը չկայ, քանի որ կու գան և զալու սովորութիւն ունին, ինչպէս կ'ուզեն սոյնպէս գան, ինչ կ'ըլլայ, կ'ըսէր : — Արդեօք ձեր ըսածները լրացուցիք հարցուցի վսեմա. փաշային : — Այո՛, պատասխանեց Նորին Վսեմութիւնը :

Վստայ խօսիլ յետոյ այսպէս : Կընդունիմք Ձեր Վսեմութեան ըսածները՝ երբ նոյն ըսածիդ համեմատ իմ ըսելիքներուս ալ այդպէս դատաստան ընէք և իրաւունք տաք : Սեզի ալ սովորութիւն եղած է, ինչպէս վերն ալ յիշեցաւ ամեն տարի Ս. Բէրիմ (Յովհաննու ծնունդ) ըստած գլուխ մէջ իրենց սեպհական եկեղեցին երթալ շարունակ ամեն տարի երեք չորս՝ երբեմն եթէ ուխտաւորին շատ ըլլայ՝ մինչև հինգ օր մաս առ մաս կը տանենք հրաման տունելով իրենց մէջ՝ ինչպէս իրենք ևս հրաման կ'առնեն մեզմէն մեր սուրբ Յակովբ և սուրբ Փրկիչ եկեղեցիները գալու համար :

Ս. յուհետ ևս ալ պէտք է սկսիմ Յովհաննու ծնունդ երթալու օրերը Ձեր Վսեմութեանը լուր տալ, որ ինչպէս Պաղդիոյ հիւպատոսին մեր վանքը գալու համար զօրք կուտաք, վաղն ալ ես անձամբ Յովհաննու ծնունդ պիտի երթամ, հիւպատոսին համազգեստին տեղ իմ տէրութեանս շնորհած չքանչաւով, անոր աթոռին փոխարէն հետս մէկ պատրիարքական աթոռ տանելով իրենց եկեղեցւոյ մէջ դնել նստելու. զօրքին զօրք, համազգեստին համազգեստ, աթոռին աթոռ, բայց սա տաւաւելութեամբ որ իմ իրաւունքս պահպանելով ձեր պարտքը կատարէք, որ է՝ նկատել հիւպատոսին աստի-

կաթողիկոսը՝ Կ. Պօլսոյ ազգային ժողովոյն պարտաւոր է իւր էութիւնը՝ կարծիք մը՝ որ նախատական կը համարուի գաւառական Հայոց և բոլոր ազգին :

Կըցալեմք ՚ի սրտէ որ Արեւելեան Սամոյի յարգոյ խմբագիրը՝ մեր սիրելի բարեկամը, որուն զրադիտական տաղանդը և բազմաճմուտ դրիչը՝ իւր շատ աշխատասիրութիւններով ծանուցեալ և զովութեան արժանի են, կըցալեմք կըսեմք, որ իւր հանդիսին առաջին թիւը այսպիսի ամենասխալ դատողութեամբ մի սկսաւ, որ անշուշտ չլինար նպաստաւորոյց ըլլալ այս պատուական ամսագրոյն յառաջագիմութեանը. զոր փափաքել կը համարեմք ՚ի պէտս բարոյական և ուսումնասիրական կրթութեան Հայ հասարակութեան :

ՀԱՐԱՄԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՅ ՄԻ

Ամսոյ Յին չորեքշաբթի երեկոյին արտաքոյ կարգի ուրախալի շարժում մի կը տեսնուէր ՚ի թաղն Հայոց : Արք և կանայք, ծերք և տղայք ոտքի վերայ էին, մէկ տունէն միւս տունը կը թային, պատուհանները լի էին շնորհալի կերպիւ հաղուած օրիորդներէ և տիկիններէ, որոց հայկական համեստ գեղեցկութիւնը և զմայլելի քմծիծաղը՝ անցնող դարձող երիտասարդաց սիրալիք ու շագրութիւնը կը զրաւէին : Սուրբ Ստեփաննոս եկեղեցւոյն դուռը մտնելներով զարդարուած էր և անոր առջև, ինչպէս նաև նոյն թաղին մէջ տեղ տեղ լուսավառ ջահեր դրուած էին. իսկ եկեղեցւոյն տաճարը Չատիկ և Դանդեան տօնախմբութեանց աւուրց նման, արծաթեղէն գեղեցիկ անթերեցով և կանթեղներով զարդարուած էին, բազմաթիւ մոմեր կը վառէին, եկեղեցւոյն դուռը և ներսը ժողովրդով, և վերնատունը տիկիններով ու օրիորդներով լեցուն էին :

Ինչէր այս տօնախմբութեան և ժողովրդական ուրախալի շարժման պատճառը :

Սոսկուայի մեծահարուստ Հայ վաճառական աղա Հօհաննէս Անանօֆի որդի՝ մեծա. աղա Ստեփան Անանօֆ ազնիւ երիտասարդին հարսանիքը կը կատարուէր նոյն գիշերը, որ քաղաքիս Անգղիոյ հիւպատոսական և առաջին թարգման մեծա. Վուկաս աղային նորատի չքնաղ դստերը հետ կամուսնանար :

Կէս գիշերը երկու ժամ մնացած, Երեկոյն մեծապատիւ Վերտիկ աղային ընդարձակ տունէն, ուր կը կատարուէր հարսանիքը, փառաւոր հանդիսիւ և շքեղ կառաց մէջ նստած ելան հարսն ու փեսան՝ ընկերութեամբ բազմաթիւ հրաւիրելոյ՝ որոնք ևս կառքով էին : Հանդիսին առջևէն կը թար երեքական երաժշտաց ընտիր խումբ մի, պարագային յարմար գեղեցիկ եղանակներ նուագելով, Լու երբ հասան եկեղեցւոյն դուռը, զարդարուն շապիկներ հագած երգեցիկ մանկուքը քաղցրաձայն հոգեւոր երգերով

ձանն և իմ, անոր օտար տէրութեան պաշտօնեայ ըլլալն և իմ մեծազօր օտանուան տէրութեան հաւատարիմ չը պատակ և ընդհանուր տղի մը Պատրիարք ըլլալս, և նմանապէս տէրութեանս ճորտարտավոր ի պատիւ Հայոց ազգին շնորհած արտօնութիւններս : Եթէ ճիշտ այս նը կարողութեան համեմատ փոխարէն հատուցանելու խօսք կուտաք, և այն ո՛չ միայն բանիլ, այլև Ձեր Վսեմութեան և անոնց ստորագրութեամբ, խաղի հանութիւն պիտի տամ. քանի որ որ տեղ մեր ուխտաւոր տանելը անոնց եկեղեցին, ուր առաջին օրը անձամբ ես կըրթամ նոյն հանդէսով և ստորագրութեամբ. երկրորդ օրը փոխանորդս կը լրկիմ. երրորդ օրը այլ ոք ես պիտի ունայ, որ մի ալ թարգման կը լրկիմ. Եթէ այսպէս կը հաճիք և կը հաճին ըստինք, հիմա կուզեն իմ հաճութիւնս տալով՝ Ձեր Վսեմութեանը լուր կուտամ որ նոյն արարողութիւնս կատարելու համար զօրք պատրաստէք, և տեղն ալ երկու ժամն առիւթ հեռի ըլլալուն համար՝ ոյսօրու ձեզ սկսիք հոն տեղ մը պատրաստել զօրաց պատասպարութեանը համար :

Վսեմա. Նաղիֆ վաշան այս բանին վրայ բաւական մտածելէն զինի ըսաւ. «Իրաւունք ունիք այս բանին մէջ և իմ պարտաւորութիւնս է որ ձեզի ալ զօրք տալով ձեր իրաւունքը և պատիւը պահպանեմ, բայց երկու ժամն առիւթ տեղ զօրք իրիկէ՛ այդ դժուար է. եթէ մէկ օր ըլլար գոնէ՛ կարելի էր, և այնտեղ զօրք եթէ մնայտեղ չկայ, եթէ վերագառնայ, դարձեալ երթալ կարելի չէ ամեն օր. այս ալ չեղաւ» : Պարձեալ աշխատեցաւ որ զմեզ համոզէ առջի ըսածին վրայ :

Կըկնեցի ես. եթէ այդ բանը ձեզ համար անկարելի կը թուի կատարել, ուրեմն կերել թէ Պաղդիոյ հիւպա-

գիտականության զանգուշակող և առաջնորդը չէին տաճարն ուր ամուսնությունն խորհուրդը փառաբանող և անտարբեր լինող տարրերով նորապսակ ամուսինները միևնույն շքեղ հասնալիս վերադարձան Երևանից Վրացի աղային տունը . և այնտեղ մեծ պարահանգիստ մի եղաւ , ու մինչև առաւօտ բոլոր հրախնդիրները պարեցին , մեծարուեստ և հաճախակի զինքն իրեն խնայելիս կենդանւոյն մեծաւոր Ստեփան Լեւոնյանի և իւր շնորհալի տիկնոջը . որոց երկուքն ալ մեծապէս կը փայլէին իրենց բարեկրթութեամբը ու ազնուական վարմունքով : Բանակի աղայ Ստեփան Լեւոնյանը որ իւր դաստիարակութիւնը Փարիզի մէջ ընդունած է , և իւր լծակից Եղիշաբէթ ծաղկահասակ օրիորդը որ քաղաքիս բրուսիացի Տիգրանէսներուն բարեհամբաւ պարոցին մէջ օրինաւորապէս կրթուած է , շատ լաւ կրթութիւն զազդիւրեց և հարկաւոր ուսմունքները ի ձեռն բերած են . հետեւեալ տարակից չէ այլ թէ եւրոպական բարձր բնկերութեանց մէջ Հայ երիտասարդաց ու տիկնայց պատիւը պիտի աւելցնեն : Չմոռանք ըսելու թէ նորապսակ տիկին Լեւոնյանը , որ լի է շնորհք , գեղեցկութեամբ , բարոյական ճիւղք և գովելի համեստութեամբ , մասնաւորապէս իւր քաղաքակից Հայ օրիորդաց պատիւ պիտի ընէ ի Սոսիւս , ուր այսօր կերթայ բնկերութեամբ իւր լծակիցին , Կոստանդուպոլիսէն անցնելով :

Յարգող խմբագիր :

Հաճեցէք զհետեւեալ ձեր պատուական լրագրին մէջ ընդունելու :

Կ. Պօլսոյ ամենապատիւ սրբազան Պատրիարք Հօր Կոնդակը՝ զոր աւելի ազգէկ է ընտիր գրուոր ատենախօսութիւն անուանել , քահանայի մը միջոցաւ եկեղեցւոյ բեմին վրայ կարգադրեցաւ կիրակի՝ Յունուար 30ին : Նոյն կոնդակը կարգադրող քահանան աւելի գոհ կընէր զժողովուրդը՝ եթէ իւր ամուր ձայնը և ընտիր առաջնորդութեան շափ ատենախօսի մը վայելելու և բնական ձևով կարգար և ոչ թէ այնպիսի ստեղծական եղանակով որ այնչափ հաճելի է ունենալու :

Սրբազան Պատրիարքին գրաւոր ատենախօսութեան գաղափարը ժողովուրդը նոյնին վրայ յափշտակած անհուն երախտագիտութիւն և մեծ զովքստ կընծայէր . և իրօք արդար և ճշմարիտ էին այն գովեստներն , քահանայի հրօքի և հայրենեաց զգայութիւն տառաջ հաւատարմութիւնը անկաւրելի էր որ այն միջոցին այն ուրիշ տառերով գրուելու արժանի ամէն մէկ խօսքերն լսած ատեն՝ չշարժի , չլաւարի , չզգածուի . ու հոգով և մարմնով չյափշտակուի հայրենեաց աւերակներուն վրայ : Իւր հետ հայրենասիրական արտասուք հոսեցին զրեթէ ամեն անոնք՝ որ զայն լսեցին . իւր հետ արժանաւոր հառաչներ սրտի խորքէն արձակեցին հայուն արդի թշուառ կացութեան վերայ . իւր խօսքերը կրօնի և հայրենեաց նկատմամբ այնչափ

տոյնին խնդրանքայ համաձայն անցնալ տարուան պէս դարձաւ զոր պիտի տար : Այո՛ , տաղ թղթին : Տուէք մեզս շունի ըսի . թող զայ զորքը վաճառու զմեզս չը շարուի , առաւօտուն հիւսիստոսին պարտ միջոցները ես անձամբ վար կ'իջնամ , զինի զորաց գլխաւորը բարեւելայ՝ կ'ըսեմ իրեն . ո՞վ խրկեց զձեզ , զորապետ տէր , և ի՞նչ պաշտօն կատարելու եկած էք հոս . ի հարկէ պիտի ըսէ , հրամանաւ վսեմա . փաշային եկած եմ , որ Պաշտօնի հիւսիստոսին գալուն զօրքերս բարեւ բռնեն ի պատիւ երեսաց նորա : Բայց ոյս երկու կտոր հրամաններէ՝ ուրիշ հրաման ունի՞ք ձեր վսեմա . փաշային , կը հարցնեմ իրեն , ի հարկէ պիտի ըսէ՝ ո՛չ . ուրեմն զորապետ տէր , դուք միայն ձեզ հրամայեալ պաշտօնը լաւ կատարեցէք ամենայն զգուշութեամբ , և եթէ ուրիշ բան պատահի մեր և լատինաց մէջ ձեր հոս եղած ժամանակ , կը խնդրեմ միջամտութիւն չընէք . վսեմիկ ինչպէս ձեզ ձեր տիրոջմէ տրուած պատուէրը ընդունելի է և պարտաւոր էք ըստ այնմ գործել և հակի , և ես ձեզ նման զորապետ մի եմ միևնոյն մեծազոր տէրութեան կողմէն ընդհանուր ազգին հաճութեամբ ազգային սեպհականութիւններս պահպանելու և հօգնելու համար . իմ վեհա . Տէրս թագաւորը իւր հրովարտական զիս նուազստ ոյս բոլոր սեպհականութեան վրայ Պատրիարք և զօրապետ կարգած է , և սաստիկ պատուէր տուած է որ իմ ազգային իրաւունքներնու վրայ հակմ , վսեմիկ իւր իրաւունքները կը սեպհուին՝ քանի որ ես անոր ողորմած հովանաւորութեան տակն եմ զինի Աստուծոյ :

Զօրապետաց այսպէս ըսելէս ետքը պէտք եղած պատրաստութիւններն կը տեսնեմ . իւր հիւսիստոսին զօրձեալ համազգեստով և արժուով գալը խմբագրուա՛ թարգ.

մեծ ազդեցութիւն ըրին ունենալու , որ անոնց ամեն մէկը կարծես թէ վարդաններու , Ղազարներու , ու Ներսէսներու պէս կ'ուխտէին ՆԱՅՆ ՕՐԸ , սիրելի հայրենիքը , սիրելի կրօնը , սիրելի ազգութիւնը : Տէ՛ս , աղաւոր և սրտաշարժ ատենախօսութիւն մի ինչ զօրաւոր ներգործութիւն կընէ սրտի վրայ . տես ընտիր քարոզի արդիւնքը որչափ բեղմնաւոր են . տես աղաւոր քարոզիչ մը ինչպէս կը տրի մարդու սրտին և հոգւոյն վրայ : Հայ եկեղեցին՝ ինչպէս ըսինք և նոյնը կը իրականէր , բանի . բուն քարոզիչներու պէտք ունի . սոյն պէտքը խիստ զգալի է , մանաւանդ այս ժամանակիս մէջ , որ ժողովուրդը խիստ ծարաւ է հոգեւոր քարոզներ լսելու . բաւական է որ նոյն քարոզները գեղեցիկ իմաստներ պարունակեն : Ժողովուրդը կը տրի կարեւոր ատենախօսութիւններու ունենալը ըլլալ , բաւական է որ անոնք տաղտկացուիչ չըլլան : Հայ ժողովուրդը ազգութեան և կրօնի նկատմամբ այնչափ կարօտ է և պէտք ունի յորդորներ լսելու , որք եթէ իւր փախարը լեցնող սուրբ և ընտիր դպրոցումներ բովանդակեն՝ կը զոհէ իւր գործերը ու ծարաւի եղջերտի նման կը զլիւս , յեկեղեցի նոյն գեղեցիկ առիթը չկորուսելու և իւր հոգւոյն ու սրտին սովորարար ծառաները գտնելու : Բայց երբ իւր փախարածը չգտնէր , բնականապէս կը ծանծարանայ , կը զայրի եկեղեցիին , ու շատ անգամ հոն աւանդ և առամօթոյ լըր սովորութիւն կը յաճախէ :

Այլեւս շնորհակալութիւն խորիմեանի և անոր ոգին ու զգացումը տաճող ամեն հայրենասիր քարոզիչներու ու եկեղեցականներու , որոնց հոգեւորական քարոզները մեծ օգուտ կըներգործեն հաւատացեալին սրտին , որք և Հայաստանեայց եկեղեցւոյ փառքն ու զարն են :

Վարդապետ ժողովուրդեան խիստ փառքի մասը օգտեցաւ խորիմեանի կոնդակին . և անոնք միայն որ կը հաւանդային անոր լիզուս ու ոգին : Անձաւոր մասը զո՛րիկ ըլլալով աշխարհիկ լեզուն հասկընալը զրկուեցան նաեւ այն մեզր ծորող խօսքերէ , որոնք մեծ արժէք ունին հայրենասիրին ու հաւատացեալին սրտին մէջ :

Մէջ . երբ արեւօք ուռումը մանաւանդ զո՛նի աշխարհիկ լիզուս հասկընալը և մարտի խօսքը ընդհանուր պիտի ըլլար մեր ազգին մէջ , որպէսզի բոլոր հայաբախութիւնը օգուտ քաղէր սոյն օրինակ Հայ ատենախօսութիւններէ , ու վերնոր եկեղեցւոյ մէջն տաճիւրէն քարոզելու և ատենախօսելու այն պատիւարակի սովորութիւնը , որ զժողովուրդը տկամայի՝ գործ կը դրուի ժողովուրդը լաւ հայր ընէ հասկընալուն համար , ի մեծ աւանդ և ի նշանաւորութիւն : Հիւանդ :

Յարգող խմբագիր :

Հաճեցէք հետեւեալ յօդուածը ձեր պատուական լրագրին մէջ անկիւնը զետեղել :

Ենթեալ շաբաթ Մարտի մէջ ծննդահարութեան

մահա կը խրկեմ իրեն ըսելու թէ , Պատրիարք բարեկամիկ ձեզ լուր կուտայ իմ բերնովս թէ , ինքը օսման եան վեհափառ թագաւորին հայատակն է , երբէք չուզէր որ Հայոց ազգին իւր վրայ ունեցած հաւատարմութիւնն ամենափոքր բծով անգամ աղարտուի , ուր վստի չկրնար Ձեր Վսեմութիւնն այսպիսի պաշտօնական հանգեթիւ (ուրիշօրմայով) և արժուով ընդունել , եթէ պարզ հագուստով կը բարեհաճէր զմեզ պատուել՝ հրամայէր : Եթէ վինի այս դարձեալ շարունակէ իւր գալուստը , խկոյն լուր կուտամ պատրաստած մարդկանց որ վստուցս երկաթեայ դուռն փակեն . բանալիքներն ինձ բրեն . ինչպէս ըրաւ ձու տարիներս իրեն սեպհական եղած խտրին եկեղեցւոյ Պատրիարքը , սուրբ Յարութեան դուռն անոր երեսին փակել տալով՝ հանգիստ . որ օր մը՝ նոյն հիւսիստոսին կարգէ զուրս զօրք բերելուն համար :

«Սոր ալ վերջը գէշ եկաւ , ըսաւ վսեմա . փաշան , այդպէս ալ աղէկ չէ :— Լաւ ուրեմն , ըսի , ես բոլոր միարանութիւնս ժողովմ իմ սեպհական վսեմէս զուրս կըլիմ , թող Լատինք դան տիրապետեն . վսեմիկ այս ձեր լուրն ընթացողը այդ ըսի է . քանի որ դուք , որ այսօր իմ վեհափառ թագաւորիս ներկայացուցիչն էք և պարտիք իմ այս տաղանալի մէջ զիս ամենայն կերպիւ պաշտպանել , դուք ո՛չ կամէք , և ինձ ո՛չ թող տաք իմ սեպհականութիւնս պաշտպանելու ընկերներս ընել :»

Կարճեալ վսեմա . փաշան բարեմտութեամբ կաշխատէր իւր թագաւորին հետ զիս համոզելու , բայց քանի որ իրաւունք մի կորսնցնելով պիտի ըլլար , իմ համոզուելու ալ անկարելի էր , և անկարելի եղաւ :

(Պիտի շարունակուի :)

նկատմամբ Երեսէս անուն ստորագրութեան դրած մէկ յօդուածը կարդալովս՝ առիթ տուաւ ինձ քանի մը խօսք խօսելու . վսեմիկ մեր եկեղեցեաց մէջ ո՛ր և ինչ իրաց նկատմամբ թերութիւններն այնչափ շատ են՝ որոնց քով ծննդահարութեան զօրծածութիւնը մեծ բան մի չ'իյնար համարուի : Լսիկա ըսելովս՝ երբէք չեմ ուզեր ծննդահարութեան շատագու չանգիւսանալ . որու անտեղութիւնը եթէ սրբազան Պատրիարքը իրօք նշմարած է իբրեւ հսկող Հայաստանեայց եկեղեցւոյ՝ իր իրաւասութեան կը պատկանի զայն արգիւնել : Սակայն փախարէի էր մեղոր՝ եթէ ոչ ծննդահարութեան՝ զո՛նի եկեղեցական երաժշտութեան զօրծածութիւնը մուտ ընէր՝ արեւմտեան եկեղեցեաց պէս , մեր եկեղեցիներուն մէջ ալ , որպէսզի երաժշտութեան վեհութիւնը զգալի ըլլար ըլլար մեր ժողովուրդեան ալ , որ դժբաղդաբար զուրկ է նոյն ճաշակէն . և որոնք եկեղեցւոյ մէջ առանց ներդաշնակութեան երգուած շարականներէ ու սաղմոսերգութիւններէ ոչ սակաւ տաղտկութիւն զգալով՝ ինչպէս կը տեսնենք , այսօրուան օրս ժողովուրդը երբէք ջերմ չէ եկեղեցւոյ և իր սովորական բարեպաշտութեան ու ծայեալ շատ անգամ եկեղեցեաց մէջ պատահած այլ և այլ թերութեանց համար իւր օրինաւոր դանդաղանքը ըրած է և կընէ միշտ :

Եկեղեցական ամուսնները արդէն խիստ երկան , և լեզուն դրեթէ ժողովուրդեան բոլորովին անհասկանալի է . խեղճ ժողովուրդը եկեղեցականաց և զըրաց այլանդակ եղանակէն ալ երբ նկատէ՝ ինչպէս չգրուի . ինչպէս շարժի ջերմանալութիւնը . ինչպէս չ'տողտկանայ . ինչպէս վառի սիրտը՝ երբ անկէ երբէք ճաշակ մը չ'առնուր և երկար ժամանակ անշարժ աչքերը եկեղեցւոյ պատերուն և սեղաններուն վրայ անկէնէն ետքը՝ վերջապէս կ'արձակուի եկեղեցիէն , առանց ժամերգութիւններէն բան մը հասկընալու . և առանց հոգեւոր մխիթարութիւն մը ունելու : Եսոր համար թող եկեղեցականը բնաւ չգան . պատի ժողովուրդէն թէ եկեղեցական չէ . թող քարոզիչը բեմին վրայէն չմեղադրէ թէ ժողովուրդը ինչպէս շատ անգամ խուռն բաղմունքեամբ , դեռ ժամերգութիւնը չ'աւարտած՝ ատեն ատեն կը թողուր կերթայ : Կայն քարոզիչն ալ՝ եթէ մեզի հետ ամեն պատճառները քննութեան տակ առնու՝ երբէք իրաւունք չուենար զայն մեղադրել : Բանի որ հրապարակական աղօթքները իբր լոկ արարողութիւն և ձեւ կը կատարուին . քանի որ իրենց ներդաշնակութիւնը և օրինաւորութիւնը չունին . հետեւեալ աւելորդ է սպասել ժողովուրդէն՝ որ անձանձիւ մինչև աւարտը եկեղեցին մնայ . քանի որ անոնցմէ ճաշակ մը չ'առնուր , բան մը չ'հասկընար , սիրտը չշարժի . հոգին չբարբառէ , և մեքենաբար կը լինայ . և անտեսն մեծ տաղտկութիւն կը լինուի՝ ինչպէս կը տեսնենք եկեղեցիի շատերու այլեայլ նիւթերու խօսքան կը դառնայ : Եսոր համար աւելի աղէկ է ճշմարիտ բարեպաշտին համար , Բրիտանիոյ ըսածին պէս , տուել առանձին փակուելով՝ մտածական աղօթքով շատանալ , քան թէ հրապարակական աղօթքի մէջ մեքենաբար կենալ . և որ աւելի գէշն է հոն անտեղութիւնները ալ նշմարելով՝ զայն խիղիւր և կամաւ մեղանշել :

Արօնական ժողովները ժողովուրդեան մեծ բարիք ըրած կը ըլլային եթէ իբր ջերմ նախաձեռնադիրք փառաց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ իրենց ծանր ուշադրութիւնը տային այն բաներուն՝ որոնցմով ժողովուրդեան սիրտը պիտի կը թուի , հոգին պիտի վառի և միտքը պիտի յափշտակուի . և ջանագիր ըլլան ուղիղ զէլ այն զգալի թերութիւններն՝ որոնք ծննդայից զօրծածութեան աւելի ժողովուրդեան բարոյական մեծ վնասներ ունին և որք պախարակելի են նոյն իսկ օտարաց աւջակ . այսինքն :

Երգիւնը՝ որ քահանայական սրբազան պաշտօնը , զո՛նի այսուհետեւ չ'յանձնուի այնպիսի տղէտ և անուս անձերու , որոց ձեռքով գործուած բարոյական վնասներն և տրուած դաշխակութիւններն անթիւ են :

Երգիւնը՝ որ մուրի և յուր վարուք ճանաչուած քահանան երբէք չպատարագէ եկեղեցւոյ մէջ , որու անարժան աղօթից չուզեր ժողովուրդը մասնակցիլ :

Երգիւնը՝ որ քարոզիչ մը իր կարողութիւնը չփորձած՝ երբէք չ'յանդգնի բեմի վրայ ատենաբանելու , որ աւելի ժողովուրդեան ծիծաղը կը շարժէ :

Երգիւնը՝ որ քահանայք և դպիրք բարձր պոռալով պոռալուտով չեղանակին , որոնց համար օտարներն անգամ ծիծաղած են :

Արդիւնէ՛լ որ հասարակ ընթերցանութեան քաջաւարժ չըլլող տիրացուներ չընդունուին դասը . որոնք շարական և սաղմոս կարդալու ատեննին հազարումէկ սխալներով կը կարդան 'ի գայթակղութի ժողովրդեան :


Արդիւնէ՛լ որ հասարակ ընթերցանութեան վարժ չըլլող քահանան և դպիրը ոչ Աւետարան կարդան և ոչ գիրք , որոնց համար ժողովուրդը շատ անդամ գգուելով՝ եկեղեցին անկատար կը թողու կերթայ :

Արդիւնէ՛լ որ քահանայք և դպիրք դասին մէջ չիտօսին իրարու հետ , մանաւանդ տաճկերէն լեզուաչփիճին , և դասը՝ եղանակելու ատեն , մըցման ասպարէզ չդարձնեն :

Արդիւնէ՛լ որ ազէտ և անխոհմտ քահանայք խոստովանութեան պաշտօնը չկատարեն , և նոյն պաշտօնը միայն բանիբուն , խոհական և տարիքը առած քահանաներու յանձնուի . և այլն և այլն :

Այս և ասոնց նման թերութիւնները՝ ծնողահարութենէ աւելի անմիջական դարմաններու պէտք ունին . զորս հարկ է որ կրօնական ժողովները իրենց ծանր ուշադրութեան ներքեւ առնուն , որպէսզի սոյն անկարգութեանց առաջին առնուելով՝ ժողովուրդը յօժարակամ յաճախի եկեղեցի և Աստուծոյ շնորհաց մասնակցի : Իսկ քանի որ այս թերութիւններն շարունակեն մեր եկեղեցեաց մէջ , 'ի հարկէ եկեղեցին թափուր պիտի մնայ , ժողովուրդը իր անխառնութիւնը եկեղեցականէն պիտի վերցընէ , և հետեւութիւնները ցաւալի և դառն պիտի ըլլան :

Հրանտ :



Զմիւռնիա , 13 Փետրուար :

Այս արի ձմեռը՝ ջրոտնի նկատմամբ՝ շատ չափաւոր եղաւ . իսկ անձրեւները առատ և երկարատեւ էին : Գարնանային օրերը այս շաբթուանէ սկսան ու արեւափայլ օրեր կընէ :

—Բարեկենդանին զուարճութիւնները և դրօսները՝ որք զանազան պատճառաց համար , աշխոյժ և քաջութեան չէին , անդորրութեամբ վերջացան : Եւրոպացի վաճառականաց ակմբանոցը (քաղինո) և Եւրոպայի նոցը՝ որոնք ամեն տարի 2—3 պարահանդէս կընէին , այս տարի իւրաքանչիւրը մէկ պարահանդէսիւ շատուցաւ : Նմանապէս հայկազուն երեւելի երիտասարդները ազոր պարահանդէս մի ըրին . ուր ազգային տիկինները և օրիորդները՝ իրենց պատուական հագուստներով , գեղեցկութեամբ ու աղնիւ և զմայելի վարժուէքով՝ այս զուարճայի և համեստափայլ ընկերութեան շուքը և աշխոյժը աւելցուցին : Մեծարանքը տուտու ընտիր էին և պարուց շարունակութիւնը ցաւաւոր : Եւրոպացի տիկերէ վոնմա . Տիւրքահայ Գորտոն—Ալլա՛ որ 'ի Փարիզ կը գտնուէր և նոյն մայրաքաղաքին շուքը շարունակելու պատճառաւ Զմիւռնիայի դասը էր , այս օրէն մէջ հիւանդանոցով իւր մահկանացու ընկերակցութիւնէն ինչպէս ինչպէս ծերութեան : Եւրոպացի վոնմութեան մարմինը մօտեւա կըստատուի 'ի Ա. Պօլի . ուր ինչ աստիճանին վայելուչ հանդիսիւ 'ի հողովորտի տառնայի :

—Ուստիոյ դեպքս 'ի Ա. Պօլի վոնմա . Ինչպէս ինչպէս զօրայեալ , որ Հայոց ազգին ուսումնասիրական յառաջադիմութեանը վերայ մարտիրոսական խեղճ կըստանի միշտ , բարեհաճեք է 50 օսմանեան լիւս նուիրելու 'ի նպաստ ազգային վարժարանին (Բերայի) :

—Իտալիոյ կառավարութիւնը՝ փափաքելով Արեւելեան ազգաց և մանաւանդ Հայ ժողովրդեան մէջ լրացողական յառաջադիմութեանը վրայ անգիւղական ներստանալ , իւր իրի իւր հիւպատոսին ձեռք ամեն անհալ Հայ լրագրաց և հանդիսից յուսակը և անոնց մէջ մէկ օրինակը խնդրած էր : Այս խնդիրը յօժարամտութեամբ կատարուեցաւ յիշեալ հիւպատոսին բարեկամ ուսումնական Հայ երեւելի երիտասարդի մը ձեռք , յորմէ իմացանք թէ 30ի չափ հայերէն լրագիր , հանդէս և ամսական տետրակ կը հրատարակուին Հայոց ազգին մէջ :

—Հին ժամանակուան սովորութեանցը համեմատ՝ Սոյն կաթողիկոս ընտրուած Նիկիոյոյոս , եպիսկոպոսը տակաւին չվերադարձաւ 'ի Ա. Պօլի՝ ըստ որոշման այս մայրաքաղաքին ազգային ընդհանուր ժողովոյն : Այլու մէջ թէ՛ Պատրիարքարանի կրկին խնդրոյն համեմատ՝ Բ. Գառնը երկրորդ հրամանագիր մի յուղարկեք է Ատանայի կուսակալին , որ զիշեալ եպիսկոպոսը անյապաղ վերադարձնէ 'ի Ա. Պօլի՝ առանց ուշադրութիւն մատուցանելու անոր առարկութեանցը :

—Արշալուստի բարեջան զօրծակալ 'ի Գաշիքի՝ ըզմիւռնացի մեծա , Աւետիս Էփէնտին Ս. Ղանճաեան՝

պաշտօնի մէջ յԱրշալուստի հատուակելով իւր ընտելութիւնը , Գաշիքի մէջ Արշալուստի զօրծակալութեան պաշտօնին սիրով յանձնուող եղաւ Միկիլեան Խիկիտի , աղան . որուն ազգաբնակեան ետանքը անշուշտ գովութեան արժանի է :

—Ա. Պօլոյ մէջ հրատարակուած Հայրենիք լրագրոյն Փետրուարի 3 թուոյն հետեւեալ ազգային կարեւոր լուրը կը կարդամ :

Պաշտօնական ժողովոյ անդամ Յրէնկեան մեծապատիւ Յակոբ Էփէնտինի եղբայրն մեծա . Յովհաննէս Էփէնտին բարեհաճեք է ազգաբնակեան ընկերակցել գերա . տէր Սիմոն որդաւան արեւելահայոց հետ և Սիւ երթալ շուտով՝ կաթողիկոսութեան ընտրութեան գործողութիւնը կատարելու համար , առանց որ և է ծախք մը պահանջելու աղջկէ , նաեւ իւր յատկէն ալ գերա . Սիմոն որդաւանի ծախքն հոգալ յանձնուող ըլլալով ,

Հրապարակաւ շնորհակալութիւն կը մատուցանեմք մեծա . Յովհաննէս Էփէնտինի՝ որ ինքնաշարժութեամբ մեծ է ազգաբնակեան , աղջկէն այս նեղ ժամանակին մեծ բեռ մը համարուած երկրորդամանակեայ խնդիր մը , առանց որ և է փոխառնութեան , իւր քաակէն պէտք եւ զսնն ալ հոգալով , անձամբ կարողացուցաւ համար փափաք ու կամք յայտնել :

—Հետադրական լուրերը կը մատուցանեն թէ Պաշտօնային ազգային երեսփոխանական ժողովը գումարուէր է 'ի Պօլոս , և իւր առաջին նիստին մէջ վիճարկութիւնները խիստ տաք և վառվառն եղեր են : Այսու ամենայնիւ ժողովը յաջողեք է իւր նախագահը ընտրելու որ է մօսիւ Կիլիկի . որուն համար , կըսուի , թէ ետանդոն հասարակաց կառավարան է :

Ազգային պաշտպանութեան կառավարութիւնը լուծուեցաւ և անոր տեղ յաջորդեց զօրծակալ իշխանութիւն մը . որուն ընտրուած անդամներն ամենքն ալ հասարակաց կառավարան են : Այս գործադիր իշխանութեան նախագահ կարգեցաւ մօսիւ Թիկի տաղանդաւոր և կենցաղաւոր անձը . որուն խոհմտութիւնը և ի աշխատարան կան պայմանները յայտնի է ամենուն :

Հասարակացութեան իշխան տաղամբ՝ ընդունուեցաւ և հրատարակուեցաւ Պաշտօնային մէջ :

—Գործադիր կայսերական կառավարութիւնը՝ հաշտութիւն ընկեալ համար , կը պահանջէ եղեր միշտ , Աւետիս Էփէնտինի՝ Պօլոսէն բերդապահ քաղաքին հետ ըստ կարգադրութեան սահմանադրուոյ 'ի կողմնէ գերա . նաեւ . նմանապէս Լորէն գաւառին մէջ մօսը՝ Մէյ բերդապահ քաղաքին հետ : Բայ յայտնի , 2000 միլլիոն թաւի կը պահանջէ վասն ծախսոց պատերազմին :

—Պօլոսէն ամենայն 10—22ն հասած հազար մի կը ծախսուի թէ հաշտութիւնը՝ ըստ հասարակաց կարծեաց , կիրակի օրը՝ այսինքն վաղը պիտի ստորագրուի՝ զաղկապալոյ նպատակաւ պայմանագրով :

ՄԱՆԱԳՈՅԺ

Յանկարծա հաս մահ մի ցատկի տիրութեան մէջ ձգեց Սիմոնեան և Իրիկեանց գերդաստանները : Մահապատիւ Սահաթի Յօհաննէս աղան Սիմոնեան , որ Իրիկեանց մահապատիւ Աւետիս աղային դատեր հետ աւանդուցած և բազմաթիւ զաւակաց հայր էր , երկէ գիշեր իւր չափաւոր հատակին մէջ զոհ եղաւ հնայեալ տիտի մը , որ յանկարծ սպաննական և մանաւոր կերպով մի ստացաւ :

Հանդուցելոյն յուղարկատրութեան հանգիստ այսօր պիտի կատարուի արժանաւոր փառաւորութեամբ :



ԾԱՆՈԹՈՒՆԵՐ

ՏԵՍԻՆ ԱՐԺԱՆԵԱՅ

Ի գատարակութիւն աշխարհի :

Այս վերնագրով տետրակ մի ձեռքբերեալ հասաւ , հրատարակեալ 'ի Կալիքա յընթաց ամին վերջացելոյ , աշխատասիրութեամբ գերա . տէր Յովհաննէս Խաչակիր աւագ քահանայի խաչկեան :

Այս համառօտ գործոյն ցիտակեան և հայրենասեր հեղինակը՝ յառաջ բերելով Նորնորդայի եւ Հնդկաստանի եկեղեցականաց մեծագոյն մասին անկարգ ընթացք եւ անորմէ ծագած ու ծագելու շարքիք 'ի վնաս ազգայնութեան , կըցաւ մեծապէս 'ի վերայ աղետալի կացութեանը՝ յորում կը գտնուի Հնդկաստանի ազգային հոգեւոր կառավարութիւնը , որուն դիմ դառնապէս կը գնացաւ : Տնք Աստուած՝ որ հայրենասիրական ոգիով շարադրեալ այս տետրակը կարող ըլլար օգտակար ծառայութիւն մատուցանել 'ի դարման յիշեալ աղետալի կացութեանը :

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ ՀԵՅԿԱԿԱՆ

Յօրիցեալ 'ի Ս. Մ. Վ. Գաւազաղեան :

Մինչեւ հիմա հրատարակուած քերականութիւններէն տարբեր ոճով և տարբեր ընթացքով քերականութիւն մըն է , գործնական հրահանգներու վրայ չ'իմեալ , որով ուսանողը փոխանակ իւր չհասկցած բաները թափախելէն զոյգ ընկելու , առաջին օրէն գործնական կը թուի կամք սովորածներուն գործածութիւնը կըսուի :

ՊԳՆՈՒՆ ՓԵՒԱՆ ԿԱՍՎԱՍՆ

ԱՆՄՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՈՅ

Հիւանդ փիլիսոփայից մէջ հոգեւոյ անմահութեան վրայ մատուցուած ամենեւնի ողջամիտ եւ միայն իր բնատուր հանճարին զօրութեամբ քրիստոնէական ճշմարտութեան մօտ հասնողն է Պղատոն՝ իր այս գեղեցիկ եւ իմաստային գրքովը . որ քրիստոնէայ իմաստասիրաց իսկ յարգանքն արժանի եղած է :

Այս նշանաւոր մատենիկն այժմ էն եւս կոյ ի խիբարեաներէն յարգուեալաւ : Հ. Ա. Ճ. վարդապետին աշխատասիրութեամբ հայերէն գրաբառ , լեզուի բարգմանուած եւ նոյն ուղիով մամլեան 'ի յոյս ընծայուած է :

Արամեան մեծ Գաւազաղեան :

Արամեան փոքր Գաւազաղեան :

Օրացոյց Միւհէնտիկեան :

Ինչպէս վէ Գաւազաղեան :

Այս ջոքս տեսակ օրացոյցները չափաւոր գիներով կը մատուցուին Պ. Հ. Դանիէլեանի գրատունը , սաւրբ Ստեփաննոս եկեղեցւոյն դիմաց :

Մատամ Հեալիկ Կուրքա , որ վէ ենեւայեւ եղած է , պատիւ կը յամարի անձին ծանուցանել իւր յարգանքն հասարակութեան քե գործարան մի հաստատած է այս քաղաքի մէջ՝ մեքենայով ձեւակերպելու կարեւոր , ինչպէս նաեւ ամեն տեսակ հագուստներ ձեւելու եւ պատրաստելու արկիւնց համար : Ապագայում ամեն գործերը ածան գիներով , փութով եւ շատ աղէկ կերպիւ կը կատարէ : Իւր գործարանը կը գտնուի Ֆրանկաց բաղը Լազարիսերէնու եկեղեցւոյն դիմաց թիւ 101 , եւ իւր բնակարանը՝ Հայոց Տիւրքապետին պարտեզին դրան մօտ թիւ 7 տանցն է : 4

ՄԵՐՏԵԱՅՈՒՆ ԿՍՏՆԱՆԻ ԴԵՐՏԵՐԸ

ձեւակերպեցանք արանց ձեւար :
1 պարզ շապիկ եւ պարանաւորի շապիկ 8—20 դր2
1 գոյգ վարսիկ 5—12
1 գոյգ մանիքիք 2—3 1/2
1 գոյգ փողպատ (քոլար) 1 1/2—3
1 բաշկիկակ լեկու փաքա 20 :

ԿԱՆԱՆՅ ՀԱՄԱՐ

ձեւակերպեցանք , բանաւոր (պրօտըր) , եւ սպակը ծաղկանց (կիրլանտ) պարանաւորի համար :
1 պարզ շապիկ եւ բանաւոր շապիկ 6—18
1 կիսաշապիկ (քամիգոյ) 5—30
1 միսօճուստակ 8—23
1 բանքայօն 4—15
1 կարնիքիք մանիքիքայի 9—40
Բանոցն 8 փր . կանգուցելու (ուրի) 5 փր . կանգուցելու :

ԾԱՆՈԹՈՒՆԵՐ

Այս լրագիրը երկու շաբթով անդամ մը՝ շաբթի օրը կը հրատարակուի : Տարեկան գինը 120 դրամու է , այլ զրամով , կանխիկ վճարելու : Գաւազաղեան լրագրաց ձեւակերպի ծախքը՝ անհոգին վերայ է : Այլ որ կուզէ , կընայ բաժանորդ գրուիլ Զմիւռնիայի Արշալուստի դրամանը . իսկ ուրիշ քաղաքացի համար , ահա կընշանակեմք լրագրոյն մեծարդոյ զարմախալոյ անուանքը , որ են .

Կոստանդնուպոլիս՝ Կ. Ս. Խիկիտեան Էփէնտին , խմբագիր—անորէն Մատիւս լրագրոյն :
Ալեքսանդրիոյ՝ աղա Միկիլեան Հալիպեան :
Գաշիքի՝ իսկ՝ տէր սղա Միկիլեան :
Յուզլի՝ աղա Սիմոն Ս. Մարտիկեան :
Մոսկուայ՝ աղա Զարմայր Մարտիկեան :
Հալէպ՝ Յօհաննէս աղա Ս. Քիւրքաճեան :
Մանչեսթըր՝ արժա . տէր Ներսէս քահանայ :
Պալատոս՝ Անգլիոյ հիւպատոսի փոխանորդ , աղա Միկիլեան մահապատիւ Միկիլեան :
Կալիպատոս՝ արարն Ս. Խ . Յովնիկեան :
Մատրոս՝ պարսն Ս. Նորդիկեան Սամ :
Պաղատիս՝ պարսն Մանուկ Որդանեան :

Խմբագիր—տէր լրագրոյն ,

Գ. Լ. Գ. Պաղարշապատ :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՅՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ